Երեց
Մաթիաս Հելդ
Յոթանասունից

Լավ օրինակ

Ես Եկեղեցու անդամ չեմ եղել մանուկ հասակում: Ես մկրտվել եմ այն ժամանակ, երբ չափահաս և գործարար մարդ էի:

Հայրս նույնպես գործարար էր: Նա շատ անհանգստացավ, երբ ես միացա Եկեղեցուն: Նա ասաց. «Դու այլևս ալկոհոլ չես օգտագործում: Դժվար կլինի այն հանդիպումների ժամանակ, որտեղ բոլորը միասին խմում են»:

Սակայն ես չէի անհանգստանում: Ես որոշեցի, որ երբ ինչ-որ մեկն ինձ ալկոհոլ առաջարկի, ես կասեմ. «Ոչ, շնորհակալություն»: Ապա կպատվիրեմ որևէ այլ բան:

Անցան տարիներ, և ես բազմիցս այդ կերպ վարվեցի: Որոշ ժամանակ անց գործընկերներս նկատել էին դա: Եթե ինձ ալկոհոլ էին առաջարկում, նրանք ասում էին. «Մաթիասը չի խմում: Նրան ուրիշ բան բերեք»: Նրանցից շատերը դադարեցին ալկոհոլ պատվիրել: «Ես նույնպես չեմ ուզում», - ասում էին նրանք:

Մի անգամ որոշ այցելուներ եկան հանդիպման: Միայն նրանք էին ալկոհոլ խմում:

Նրանք ինձ հարցրին. «Ինչո՞ւ ոչ ոք ալկոհոլ չի խմում: Նրանք բոլորը ձեր եկեղեցու անդա՞մ են»:

«Ոչ»,- ասացի ես:

Ես իմ գործընկերներին չեմ քարոզել Իմաստության խոսքի մասին: Ես ուղղակի ամուր էի իմ համոզմունքներում, և նրանք նկատեցին իմ օրինակը:

Դուք նույնպես կարող եք լավ օրինակ լինել: Ուրիշները կնկատեն, երբ դուք ընտրեք ճիշտը: Դուք պարզապես կարող եք օգնել նրանց ավետարանով ապրելու միջոցով: ●

Հեյլի Յանսի հետ ունեցած հարցազրույցից:

ՆԱՄՈՒՇԵՐԸ՝ ՍԱՆ ՍՄԻԹԻ